Հաշվետվություն

2017 թվականի դեկտեմբերի 16-ից 24-ը Ճապոնիա (ք. Տոկիո)՝ INGEROSEC ընկերության կողմից կազմակերպվող «Հայաստանի Հանրապետության հրշեջ-փրկարարկան սարքավորումների բարելավում» ծրագրի շրջանակներում անցկացվող տեխնիկական և գնային առաջարկի մրցույթին մասնակցության վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը.**

Տիգրան Ղարիբյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ճապոնիա, ք. Տոկիո:

4. **Հրավիրող կողմը.**

Ճապոնական INGEROSEC ընկերություն:

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն INGEROSEC ընկերության կողմից կազմակերպվող «Հայաստանի Հանրապետության հրշեջ-փրկարարկան սարքավորումների բարելավում» ծրագրի շրջանակներում անցկացվող տեխնիկական և գնային առաջարկի մրցույթին:

6. **Քննարկված թեմաները.**

Մրցույթին մասնակցության իրավունք էին գնել թվով 4 ճապոնական ընկերություններ (**Futurebud International, Marubeni, Toyota Tyusho, Itouchu**), սակայն մրցույթին մասնակցեցին միայն Toyota Tyusho և Itouchu ընկերությունները: Որակավորման փուլում Toyota Tyusho ընկերության հայտը մերժվեց՝ տեխնիկական բնութագրի պահանջներին անհամապատասխանության հիմքով: Արդյունքում որակավորվեց միայն Itouchu ընկերությունը: Մրցույթի նախահաշվային գինը կազմում էր 1.495.784.000 ճապոնական իեն: Սակայն Itouchu ընկերությունը հրշեջ-փրկարարական գույքի մատակարարման համար ներկայացրել էր 1.526.037.040 ճապոնական իեն: Բանակցությունները

արդյունքում Ընկերությունը առաջարկած գինն իջեցրեց 1.480.000.000 ճապոնական իենի, ինչի արդյունքում վերջինս հաղթող ճանաչվեց:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի շրջանակներում հանդիպել եմ Ճապոնիայի միջազգային համագործակցության (JICA) գործակալության տարածաշրջանային ներկայացուցիչների հետ (քաղաքավարության այց), ինչպես նաև Տոկիոյի հրշեջ-փրկարարական ակադեմիայի ղեկավարության հետ, որտեղ քննարկվեցին հարցեր՝ ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ հետ հետագա համագործակցության հնարավորության վերաբերյալ (մասնավորապես դասախոսների վերապատրաստման հնարավորության վերաբերյալ):

Միաժամանակ հայկական կողմի խնդրանքով այցելեցինք մրցույթում հաղթող ճանաչված ընկերության գործարան՝ ծանոթանալու վերջինիս կարողություններին և արտադրական հնարավորություններին:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Մրցույթի արդյունքում ս.թ. դեկտեմբերի 22-ին Itouchu ընկերության հետ ստորագրվեց հրշեջ-փրկարարական գույքի մատակարարման պայմանագիրը:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ապահովել մեկամսյա ժամկետում ՀՀ կենտրոնական բանկում հաշվեհամարի բացումը, ինչպես նաև պարբերաբար կապ հաստատել ճապոնական գործընկերների հետ (թե INGEROSEC և թե ITOUCHU ընկերությունների)՝ մատակարարման ժամկետների պահպանման և նշված հրշեջ-փրկարարական սարքավումները ՀՀ առաքելու ընթացքում առաջացած խնդիրների հաղթահարմանը աջակցելու նպատակով:

9. **Գործուղվողը.**

Տիգրան Ղարիբյան

10. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

26.12.2017թ.